Թիւրք ժողովուրդը, որ գրեթէ միայնակ պաշտպանում է արևելքը արևմուտքի կապիտալիստների ընչաքաղցութեան դէմ, չէր կարող թոյլ տալ հայերին անընդհատ դաւադրել նրա կեանքի դէմ և նրա արևելեան գաւառների վրա յարձակումով փորձել ձեռք երկարացնելու Միջագետքի և Պարսկաստանի բրիտանական բանակներին՝ փչացնելու համար ընդմիշտ դժբախտ Ասիայում դեռ ևս մնացած մի քիչ ազատութիւնը և անկախութիւնը:

Այս նկատումները և հայ զինուորների անընդհատ յարձակումներն էին, որ մեզ պարտաւորեցրին եռանդուն կերպով շարժուել ձեր երկրի դէմ, բայց ցանկանալով արիւնհեղութեան վերջ տալու համար որևիցէ առիթը ձեռքից չփախցնել՝ խնդրում ենք Երևանի կառավարութիւնից այս յայտագիրը նկատել որպէս խաղաղութեան վերջնական առաջարկ Թիւրքիոյ Մեծ Ազգային Ժողովի կառավարութեան կողմից: Որպէսզի հաշտութիւնը կայանայ, բաւական է, որ Հայաստանը մեզ իրական երաշխիք տայ, թէ այսուհետև նա մեր դէմ որևիցէ յարձակողական գաղափար չի սնուցանելու և դադարում է Արևելքում Անգլիայի կապիտալիստների առաջապահը լինելուց: Մենք պարտաւոր ենք հայ ժողովրդին միևնոյն տեսակ ապահովութիւններ տալ և խնդրում ենք այս մասին անմիջապէս սկսել խաղաղութեան բանակցութիւններ: Ցուսալով, որ մեր չափաւորութիւնը և մեր խաղաղասիրական զգացումները կատարելապէս պիտի գնահատուեն, խնդրում եմ, պ. նախարար, ընդունել ամենաբարձր յարգանքներիս հաւաստիքը:

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար՝ Ահմէդ Մուխտար

Ուրեմն, այս գրութիւնը գրուելուց մէկ օր յետոյ, այսինքն՝ նոյեմբ. 3-ին Հայաստանի կառավարութիւնը Անգորա է ուղղել հետևեալ դիմումը:

Տաճկաստանի Ազգային Մեծ Ժողովի կառավարութեանը Անգորայում

3 նոյեմբ. 1920 թ.

Տաճիկ և հայ ժողովուրդների բաղմադարեան հարեւան լինելը, Տաճկաստանի և Հայաստանի հանրապետութեան սահմանների ընդհանրութիւնը անպայման պահանջում են այդ պետութիւնների մէջ խաղաղ յարաբերութիւններ, որոնց համար հիմք պիտի ծառայեն փոխադարձ յարգանքը և իւրաքանչիւր երկրի կենսական շահերը: Իր բոլոր հարևանների հետ Հայաստանը ձգտում է այդպիսի յարաբերութիւնների և բոլորի հետ էլ գտնում է խաղաղ յարաբերութիւնների մէջ:

Հայաստանի կառավարութեան և ժողովրդին յայտնի է Ազգային Մեծ Ժողովի յայտարարութիւններից, որ և տաճիկ ժողովուրդը և Ազգային Մեծ Ժողովն ընդունելով ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը՝ միւս քաղաքակիրթ ժողովուրդների հետ ճանաչել են Հայաստանի Հանրապետութեան խաղաղ և անկախ գոյութեան իրաւունքը: Այդ բոլորն աչքի առաջ ունենալով՝ Հայաստանի ժողովրդի և կառավարութեան համար միանգամայն անհասկանալի և անսպասելի է ձեր զօրքերի առաջխաղացումը դէպի Հայաստանի սահմանները, առանց բացատրելու պատճառները և նպատակները, նամանաւանդ, ձեր կատեգորիկ յայտարարութիւնից յետոյ — չանցնել օսմանեան պետութեան սահմանները: Իբրև առաջխաղացման արդիւնք կատարւում է անօգուտ արիւնհեղութիւն:

Ստեղծուած բաղխումը խաղաղ ճանապարհով լուծելու ցանկութեամբ, Հայաստանի կառավարութիւնը դեռ հոկտ. 8-ին իր լիազօրի միջոցով Պոլսում աշխատել է ձեզ մօտիկ տաճկական շրջաններում իմանալ սկսած